№ 116 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 29 — 1908 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 29 № 116

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒՆԻՍԻ 1-Ից ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

Ամսական Մէկ ռուբլի

Ամերիկա տարեկան	6 դոլար
Եւրոպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 ռուբլի

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, մայիսի 29-ին
Ժողովարանի ամարային շինութեան մէջ
պ. պ. անդամների, կանդիդատների, նրանց ընտանիքների և հիւրերի համար կը կայանայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
կը նուագեն սազանդարներ
Սկիզբն է երեկոյեան 9 ժամին
առ. 1—1

Ուրբաթ, մայիսի 30-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
նշանակված է
Հայոց Ազգագրական Ընկերութեան
ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ՆԻՍՏԸ
ուր ընկերութեան պատուաւոր անդամ
Ն. ՄԱՐՐԸ
ռուսերէն լեզուով կը զեկուցանէ 1907 թ. իր կատարած
Ա.ՆԻ պեղումների
մասին
I. Երերոյքի տաճարը V—VI դարում.
II. Բագրատունիների պալատի աւերակների պեղումները.
Տոմսակները կարելի է ստանալ պ. Ե. Ծատուրեանի խանութում. արժէն 2 ր. մինչև 30 կ.։
Սկիզբն է երեկ. ժամը 8-ին
Նախագահ ընկ.՝ Ա. Մելիք-Ազարեան
(չ. հ. ու.) առ. 3—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
Մայիսի 20-ից կը վերսկսի հիւանդների ընդունելութիւնը կովկասեան հանքային ջրերում։
Հասցէն՝ Էսսէնտուկի, Верхняя Курсовая ул., дача Введенской.
(Ե. Հ. Կ.) առ. 10—10

ԲԺԻՇԿ
Գ. Ե. Խօջափարուիսով
Կայսերական Նովոռոսիյսկի համալսարանի կաշուի և վիներական հիւանդութիւնների ամբիոնի ասիստէնտը ընդունում է հիւանդներին Պկատիգորսկում, Ցարսկայա փող., տ. Բախմետևիչի, Ծաղկանոցի դիմաց։
(Կ. Ե. Հ.) առ. 5—3

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ամենախոշոր երևոյթը քաղաքական հորիզոնում անգլիական թագաւորի այցելութիւնն է Ռուսաստանին։

Նաչին անգամն է, որ անգլիական թագաւորը պաշտօնական այցելութիւն է անում Ռուսաստանին։

Եւ այդ այցելութեանը տրված է ոչ միայն ազգակցական տեսակցութեան կերպարանք, այլ և քաղաքական բնաւորութիւն։

Անգլիական թագաւորի տեսակցութիւնը Ռուսաց Կայսրի հետ հետևանք է այն մերձեցման, որ կատարվել է քաղաքական հողի վրա երկու պետութիւնների՝ Ռուսաստանի և Անգլիայի միջև։

Վաղեմի մրցակիցները համաշխարհային քաղաքական ասպարէզներում, դարաւոր հակառակորդները դեռ Բոնապարտի օրերից՝ ահա երկու տարի է, որ բանակցութիւններ են վարում համաձայնութիւններ կայացնելու մի շարք խնդիրների վերաբերութեամբ, որոնք թէ մասնաւորապէս յատուկ շահագրգռութիւն ունեն այդ պետութիւնների համար և թէ կարևոր նշանակութիւն միջազգային քաղաքականութեան համար։

Եւ քաղաքական աշխարհը ամենախորին ուշադրութեամբ հետևում է քայլ առ քայլ այն յայտնութիւններին, որոնք հանդէս են գալիս իբրև հետևանք անգլո-ռուսական մերձեցման։

Անգլիայի և Ռուսիայի ձեռնհասութեան շրջանում գտնվող մի շարք միջազգային խնդիրներ, որոնք զրական լուծում չէին կարողանում ստանալ երկու պետութիւնների խուլ մրցակցութեան և հակառակութեան շնորհիւ, այժմ հնարաւորութիւն են ձեռք բերում վերաքննվելու և նոր ոգով լուծում ստանալու։

Պէտք է այստեղ արձանագրել, որ Անգլիայում վաղուց մի շարք քաղաքագէտներ հող էին պատրաստում անգլո-ռուսական մերձեցման համար և ուժեղ մաքառումներ էին մղում այն ֆանատիկոս ջինգոիստների դէմ, որոնց մշտական բնաբանն էր թշնամութիւն և ատելութիւն զէպի Ռուսաստանը. նրանք աշխատում էին համոզել, որ Անգլիան և Ռուսաստանը պէտք է կանգ առնեն իրանց առաջխաղացութեան մէջ և յարգելով փոխադարձ շահերը՝ միանան ընդհանուր նպատակներ իրագործելու համար։

Այսօր անգլո-ռուսական մերձեցման և համաձայնութեան քարոզ խօսողները հասել են իրանց նպատակին։ Եւ էդուարդ թագաւորի այցելութիւնը այդ մերձեցման յայտնութիւնն է։

Ճիշտ է, այդ մերձեցումը վերաբերում է միայն որոշ խնդիրների և դեռ խօսք չը կայ դաշնակցութիւն կազմելու մասին, բայց կարևոր ու էական է արդէն և այն, ինչ որ կատարվել է համաձայնութիւնների շրջանում։

Եւ քաղաքական աշխարհը ըմբռնում է տեղի ունեցող եղելութիւնների կարևորութիւնը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բեվէլ, 26 մայիսի

Կայսերական գնացքներով առաւօտեան ժամը 9-ի մօտերը Բեվէլի կայարանը հասան Նոցին Մեծութիւնը թագաւորը, թագուհի Ալէքսանդրա Փէոդորովնան Դահաժառանգի և Մեծ Իշխանուհիներ Օլգա, Տատիանա, Մարիա և Անաստասիա Նիկոլայէվնաների հետ, թագուհի Մարիա Փէոդորովնան, Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնան, Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչը, պրինց Օլդենբուրգսկին։ Նոցին Մեծութիւններին ուղեկցում էին պալատի մինիստրը, շքախմբի օրիորդները և շքախումբը։ Եկան նաև մինիստրների խորհրդի նախագահը, արտաքին գործերի և ծովային մինիստրները, Դալիցիայի իշխանը, կոմս Հէյդէնը և իշխան Գորչակովը։
(«Հ. Գ.»)

—

Բեվէլ, 27 մայիսի

Առաւօտեան ժամը 9-ին եկան թագուհի Կայսրուհի Մարիա Փէոդորովնան, հելլէնների թագուհին, Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնան, Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչը, պրինց Պեսար Ալէքսանդրովիչ Օլդենբուրգսկին։

Երբ Նոցին Մեծութիւնները դուրս եկան վագոնից, զեներալ նահանգապետը, նահանգապետը, ազնվականութեան պարագլուխը և քաղաքագլուխը բաղդ ունեցան ծաղկափնջեր մատուցել նրանց։

Առաւօտեան ժամը 9-ին հորիզոնի վրա երևացին անգլիական նաւերի գոլորշիները։ Առաջինը գալիս էր «Վիկտորիա և Ալբերտ» գրօսանաւը կայսերական դրօշակով։ Կայսերական «Ճտանդարտ» գրօսանաւից լսվեցին թնդանօթի պարպումներ։ Ի պատասխան թնդանօթներ արձակեցին «Մինոտաւր» և «Ագիլլէս» յածանաւերը։

Անգլիական թագաւորական գրօսանաւը խարիսխ ձգեց «Ճտանդարտի» և «Պոլեարնայա Զվէզդայի» միջև։ Կապիտանական փոքր կամուրջի վրա ողջագուրանքով գլուխ էին տալիս անգլիական թագաւորը և թագուհին, շրջապատված իրանց շքախմբով։ Թագաւոր Կայսրը «Ճտանդարտից» իջաւ կայմանաւը և պալատի մինիստրի, իշխան Գոլիցինի, կոմս Հէյդէնի, գլխաւոր կապիտան Նիլովի, հերթապահ ֆլիգէլ-ադիւտանտի ուղեկցութեամբ դիմեց հանդիպելու թագաւորին և թագուհուն։ Լսվեց թնդանօթների պարպում։ («Հ. Գ.»)

—

Բեվէլ, 28 մայիսի

Նոր նաւահանգստում, այն տեղում, ուր Նոցին Մեծութիւնները պէտք է իջնէին կայսերական գնացքներից, նշանակված էր պատաւոր պահակախումբ։ Այստեղ էին նաև Բեվէլի բոլոր կրթական հաստատութիւնների սաները և սանուհիները։ Երկաթուղագծի երկու շարքով կանգնած էին աշակերտները։ Ամբողջ գիծը զարդարված էր ծաղիկներով և դրօշակներով։

Նոցին Մեծութիւններին դիմաւորելու համար եկել էին նահանգապետը, նաւահանգստի պետը, նահանգական ազնվականութեան պարագլուխը, Բեվէլի քաղաքագլուխը։ Այստեղ եկան մինիստրների խորհրդի նախագահը և ծովային մինիստրը։

Նոցին Մեծութիւնները Օգոստափառ երեխաներով դուրս եկան վագոններից։ Նրանց ուղեկցում էին պալատի մինիստրը և շքախումբը։ Թագաւորը ընդունեց ծանուցումը նահանգապետից, որը բաղդ ունեցաւ Թագաւորին մատուցել ծաղիկների մի շքեղ փունջ։ Թագաւորը բարևեց պահակախմբին և «ուռա» աղաղակներով անցաւ նրա մօտով։ Նորին Մեծութիւն Թագուհուն բաղդ ունեցան փունջեր մատուցել նահանգական պարագլուխը և քաղաքագլուխը։ Ամբողջ ժամանակ աշակերտութիւնը օդը թընդացնում էր «ուռաներով»։

Ճիշտ ժամը 11-ին, թնդանօթների պարպումի հետ տեղի ունեցաւ երկու միապետների տեսակցութիւնը։
(«Հ. Գ.»)

—

Բեվէլ, 27 մայիսի

Թագաւոր Կայսրից յետոյ մեկնեց Թագուհի Կայսրուհի Մարիա Փէոդորովնան։ Թագակիր հիւրերին ընդունեցին Նոցին Մեծութիւնները։ Կայսրը և թագաւորը համբուրվեցին։ Օդը թնդում էր հազարաւոր «ուռաներից» և երաժշտախմբերի նուագումից։

Փոխադարձ ողջունից յետոյ Կայսրը, թագաւորը, թագուհին և Վիկտորիա պրինցուհին շքախմբերի ուղեկցութեամբ դիմեցին շոգենաւակներով «Ճտանդարտ» գրօսանաւը, իսկ Կայսրուհին գնաց «Պոլեարնայա Զվէզդան»։

Երբ Նոցին Մեծութիւնները իջան կայմանաւից, կրկին թնդանօթներ պարպվեցին։ Մօտենալով «Ճտանդարտին», Նոցին Մեծութիւններին հանդիպեցին անգլիական ազգային օրհներգով։ Կրկին պարպվեցին թնդանօթներ։

Օգոստափառ բարեկամների հանդիպումը կրում էր ամենասրտագին բնաւորութիւն։ Միաժամանակ «Ճտանդարտ» եկան անգլիական նաւերի ծովապետները և կառավարիչները։ Տեղի ունեցան երկու կողմից բարևներ, որից յետոյ բարձրաստիճան հիւրերը թնդանօթների արձակումով վերադարձան թագաւորական գրօսանաւը։

Ժամը 1 և 45 րոպէին «Պոլեարնայա Զվէզդայի» վրա կայացաւ նախաճաշ։ («Հ. Գ.»)

—

Բեվէլ, 27 մայիսի

Գիշերս եկաւ «Ալմազ» յածանաւը։
(«Հ. Գ.»)

—

«Berl. Tag.» լրագրի Թէհրանի թղթակիցը հեռագրում է, որ պարսկական նոր կաբինէտը արդէն խնդիրք է տուել հրաժարականի մասին։

Մայիսի 17-ին տեղի է ունեցել դաջարների—շահի ցեղի անդամների. ժողովը, որտեղ, լուրերին նայելով, որոշված է խզել յարաբերութիւնները Ռուսաստանի հետ։

Յաջորդ օրը նոր կաբինէտ է կազմվել, որի անդամների մեծ մասը նախկին մինիստրներ են։

Շահը վճռել է ամբողջ ամառը անց կացնել քաղաքում երկիւղ կրելով նոր ապստամբութիւնից։

Անջումանները պահանջում են, որպէսզի մինիստրները ևս չը հեռանան քաղաքից։

—

«Голосъ Москвы» լրագրին հաղորդում են, որ, Թէհրանում տարածված լուրերի համաձայն, շահի գաղտնի հեռանալը քաղաքից դէպի իր ամարանոցը բացատրվում է նրանով, որ նա մտադիր է գաղտնի կերպով գնալ Եւրոպա։

Այդ լուրը ազմուկ է յարուցել։

Մէջլիսը պահանջում է, որ շահը անմիջապէս վերադառնայ, սպառնալով հակառակ դէպքում նոր շահ ընտրել։ Շահը իբրև թէ խոստացել է վերադառնալ։

Պարսից դեսպանութիւնը Պետերբուրգում յայտնել է, որ ինքը պաշտօնական տեղեկութիւններ չէ ստացել շահի գնալու մասին։ Նա միանգամայն բացասում է շահի փախուստեան հաւանականութիւնը, թէև թոյլ է տալիս, որ կարող են լուրջ բարդութիւններ առաջ գալ։

—

Թէհրան, 27 մայիսի

Գիշերս շահը ձերբակալել տուեց պրինց Ջէյալ-ուդ-Դովլէին, Սալա-ուդ-Դովլէին, Սարդար-Մանսուրին և շահի դէմ վերջերս մղված ագիտացիայի միւս մասնակցողներին, որի գլխաւոր դեկավարութիւնը պատկանում է ըստ երևոյթին Ջէյալ-ուդ-Դովլէի հայր պրինց Ջիլլի--սուլթանին։ Մէջլիսը այդ ագիտացիայի մէջ ոչ մի մասնակցութիւն չունեցաւ։ Էմիր Ջէնգը բաստից դուրս եկաւ և ապաստանեց ռուսական միսսիայում։ Բոլոր հեռագրաթելերը, բացի Աստարաբադից, Թէհրանի հետ կտրված են։

Մայիսի 26-ին շահը մի դեֆտխատ (հրովարտակ) հրատարակեց և հրամայեց տարածել ամբողջ քաղաքում։ Շահը իր այդ հրովարտակով վստահեցնում է ժողովրդին, որ ինքը հաւատարիմ է սահմանադրութեան, որին նա երդվեց. ձերբակալութիւնները բացատրվում են բացառապէս յեղափոխականների որոգայթներին վերջ դնելու ցանկութեամբ, որոնք արդեն լինում երկրում կարգ ու կանոն և հանգստութիւն հաստատելուն։ Մայրաքաղաքի ազգաբնակութիւնը շահի դեֆտխատը մեծ համակրանքով ընդունեց։ Քաղաքում առայժմ հանգիստ է։
(«Հ. Գ.»)

—

Սոֆիա, 27 մայիսի

Ժողովրդական ժողովի ընտրութիւնների վերջնական հետևանքը այսպիսի է. 175 դեմոկրատներ, 21 անկուսակցական ազգարներ, 3 նացիոնալիստներ, 3 բաղսոլովիստներ, 1 ցանկովիստ. ներկայացուցիչներ չունեն հինգ կուսակցութիւններ, որոնք են՝ ստամբոլովիստները, արմատական դեմոկրատները, ցոնչէվիստները և երկու սոցիալիստական ֆրակցիաները։ Որովհետև թեկնածուներից մի քանիսը, առաւելապէս դեմոկրատական մինիստրները, ընտրվել են միաժամանակ մի քանի շրջաններում, պահանջվում է 32 լրացուցիչ ընտրութիւններ։
(«Հ. Գ.»)

—

Նովարա, 27 մայիսի

Երէկ ցերեկով Բօկկա-Պիէտրում, Վարալոյի մօտ, ապրանքատար գնացքը ընդհարվեց մարդատարի հետ, որ լի էր ուխտաւորներով։ Ապրանքատար գնացքը մեծ ոյժով դիպաւ նրա վերջին վագոնին. հինգ հոգի սպանվեցին. եօթը ծանր վիրաւորվածներին տեղափոխեցին Վարալոյի հիւանդանոցը, քսաներկու վիրաւորվածներին— Նովարա. մնացածներին տեղաւորեցին Բօկկա-Պիէտրի ծխական եկեղեցու շինութեան մէջ։ Ծանր վիրաւորվածներից չորսը մեռան։
(«Հ. Գ.»)

—

Ուրմիա, 27 մայիսի

Թահիր-փաշան մայիսի 26-ին հասաւ Ուրմիա։ Սպասում են, որ թիւրքպարսկական սահմանագլխի առիթով բանակցութիւնները կը վերսկսվեն։
(«Հ. Գ.»)

—

Սարատով, 27 մայիսի

Դատաստանական պալատում սկսվեց ուսանող Բժանսիցկու և միւս 73 հոգու գործի քննութիւնը, որոնք մեղադրվում են անցեալում յեղափոխական կուսակցութեանը պատկանելու մէջ։ Վկաների թիւը հարիւրից անց է։
(«Հ. Գ.»)

—

Սարատով, 27 մայիսի

Թուրքական Սրեդնայա Տերիւկա կոչված գիւղում այրվեցին 300 տներ։
(«Հ. Գ.»)

—

Բաթում, 25 մայիսի

Այսօր, առաւօտեան ժամը 10-ին «Նաւագնացութեան և առևտրի ռուսական ընկերութեան» նաւահանգըստում բեռնող և դատարկող բանուորների մէջ ընդհարում տեղի ունեցաւ։ Պատճառն այնտեղից ծագեց, թէ ով պէտք է բեռնէ, ով պէտք է դատարկէ։ Սկսվեց տուր ու դմբոց, որի ժամանակ երևացին ժահակներ. հետևանքում տեսան, որ երկու կողմից էլ շատերը վիրաւորված են։ Կուին վերջ դրին ժանդարմները՝ օդում մի քանի անգամ կրակելով։

—

Լինդաու, 27 մայիսի

Զրեգենդի մօտ երկաթուղու վրա փլվեց ժայռի մի մասը և ընկնելով վերջին վագոնի վրա՝ նրան և նրա հետ կապված վագոններից երեքը գլորեց Ալ գետը։ Քսան ճանապարհորդներ ջարդուածքներ ստացան, երկու հոգի անհետ կորան։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՐԱՄԻՏ ԱՆՀԵԹԵԹՈՒԹԻՒՆ

Երևի գիտեն ընթերցողները, որ մեր Երևելի օրէնսդիր ժողովը, օր ու գիշեր թշուառ ժողովրդի ցաւերի ու տառապանքների մասին մտածող և սիրտ մաշող Գեոտական Դուման իր առաջնակարգ հոգսերից մէկն էլ այն խնդիրն էր դարձրել, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնէ արդիօք կառավարութիւնը, որպէսզի կարելի լինի Ռուսաստանի հասարակ ժողովրդի մէջ խիստ տարածված արբեցութեան դէմ աջողութեամբ կռուել։ Այդ խնդրով աւելի մանրամասն և լրջութեամբ զբաղվելու համար մինչև իսկ յատուկ մասնաժողով էր ընտրել, անշուշտ՝ շատ ձեռնհաս և մասնագէտ անձերից։ Այժմ, ինչպէս իմանում ենք մայրաքաղաքի թերթերից, այդ մասնաժողովը վերջացրել է իր զբաղմունքները։ Մասնաժողովը, երկար ու բարակ մտածելուց, երևի, մի շարք գիշերներ անքուն լուսացնելուց և խնդիրը բազմակողմանի քննելուց յետոյ, վերջապէս գտել ու մշակել է այնպիսի միջոցներ, որոնցով շատ կարճ ժամանակի ընթացքում պէտք է արմատակապէս վերջ տրվի ժողովրդական չարիքներից այն մեծ չարիքին, որի անունն է արբեցողութիւն։

Մասնաժողովի գտած ու մշակած խոստ

արժատական, բայց և միևնոյն ժամանակ չափազանց պարզ միջոցների հետ ծանօթանալով, մարդ ցնում է զարմացած, թէ ինչպէս մինչև օրս մեր և եւրօպական նշանաւոր կառավարչական մարդիկ չեն կարողացել այդ մասին մտածել... «Ահա թէ ինչ է նշանակում ներկայացուցչական կառավարութիւն ունենալը,—մտածում ես ակամայից,—ահա թէ որպիսի հանճարեղ գլուխներ են թաղնված «իսկական ռուս» մարդկանց և «հոկտեմբերականների» շարքերում»։ Եւ միթէ մի այլ կազմ ունեցող Պետական Դուման պիտի կարողանար այդպէս հեշտութեամբ լուծել այնպիսի մի ծանրակշիռ խնդիր, ինչպիսին է արբեցողութեանը վերջ դնելու խնդիրը։ Ապացոյց, որ մի այլ կազմ ունեցող օրէնսդրական մարմին չը պիտի կարողանար խնդիրը այդպէս հեշտութեամբ լուծել, այն է, որ մինչև օրս եւրօպական պարլամենտներից և ոչ մէկը չէ կարողացել այնպիսի հնարագիտութեան հասնել, ինչպիսին հասել է վերոյիշեալ մասնաժողովը։

Դատեցէք ինքներդ, ընթերցող. արբեցողութեանը մէկ անգամից վերջ դնելու համար, «մասնաժողովը» մտածել է, որ ամենալաւ և կարուկ միջոցը այն կը լինի, եթէ վաճառվող օղու շիշերի եարլիկները փոխվեն։

Դուք դեռ չէք հասկանում խնդրի էութիւնը։ Եւ դա շատ պարզ է, որովհետև առաջարկը շատ նուրբ է և կարօտ բացատրութեան։ Առաւասիկ և բացատրութիւնը առաջարկվում է, որ այսուհետև օղու շիշերի վրա կպցված եարլիկի վրա տպագրված լինի ոչ թէ «столовое вино» կամ «казенное вино», ինչպէս որ այժմ է, այլ որ լինի գրված «40 աստիճան ալկոհոլի լուծուածք»։ Այդ դեռ բաւական չէ. նոյն եարլիկների վրա այսուհետև պէտք է նը-կարված լինի ոչ թէ գործարանատիրոջ էտիկէտը, ինչպէս օրինակ ժայռի վրա կանգնած մի այծ (Սարաջիվի էտիկէտը) կամ մի զանգակ (Շուստովի էտիկէտը), այլ դրանց փոխարէն պիտի լինի նկարված մարդու գանգ, երկու խաչաձեւ ոսկորների վրա լեցված, այսինքն ճիշտ այնպիսի նշան, ինչպիսին սովորաբար դեղատներում կպցնում են թոյն պարունակող շիշերի վրա։

Կարծում ենք՝ այժմ ամեն բան հասկանալի է. օղի գնել ցանկացողը կը մտնի օղեվաճառի խանութը և, այնտեղ շիշերի վրա միմիայն նկարված գանգեր տեսնելով ու միևնոյն ժամանակ չը հասկանալով, թէ ինչ են նշանակում «40 աստիճան ալկոհոլի լուծուածք» խօսքերը, սարսափով յետ կը փախչի, ենթադրելով թէ ինքը սխալմամբ, օղեվաճառի մօտ մտնելու փոխարէն, թոյնավաճառի մօտ է մտել, ու, այդպէս մի քանի տեղ շրջելուց յետոյ, կը համոզվի, որ այլես Ռուսաստանում օղեվաճառանոցներ չը կան, այլ բոլորն էլ թոյնավաճառ են դառել, կը հրաժարվի խմելուց և... վերջ արբեցողութեանը ու նրանից առաջացող բոլոր չարիքներին։

Դէ՛, հիմա ասացէք, թէ դա մի շատ սրամիտ ու արմատական միջոց չէ... Ասացէք, թէ մի ուրիշը և մի այլ երկրում ընդունակ կը լինէին այդպիսի... անհեթեթութեան։

Եւ այդ անհեթեթութիւնը պիտի ներկայացվի Պետական Դումային, և օրական տաս ռուբլի ստացող մի քանի հարիւր պատգամաւորները ամենայն լրջութեամբ պիտի զբաղվեն այդ արսուրդով և, գուցէ, մի քանի նիստեր նուիրեն նրան...

Խ. Ազատ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Լոնդոն, 30 մայիս (Ն. տ.)

Երիկ միայն վերջացաւ Ֆրանսայի մեծ հանրապետութեան նախագահ Ֆալիէրի այցելութիւնը Լոնդոն, բայց և այնպէս դրօշակները դեռ ևս կը ծածանին շատ մը փողոցներու վրայ և տակնուռուշ մէջ են տակաւին հանդիսատես ամբոխին խանդավառողջոյնի ձայները.—«Vive M. Fallières!», «Vive la France!», «Vive l'Entente Cordiale!».

Արքայական ընտանիքն ու Լոնդոնի քաղաքապետութիւնը, ինչպէս նաև ժինիստրական խումբը ոչէ՛ ջանք չխնայեցին նախագահին այցը կատարեալ ընելու, իսկ հեռացման նախընթաց գիշերը Օպէրան տրուած gala ներկայացումը եղական ու անմոռանալի պիտի մնայ։ Միմիայն ծաղկի համար 20,000 ռուբլի ծախսուած էր այդ երեկոյ շէնքին ներսը զարդարելու, թողլով այլ ծախսեր...

Ֆրանսական ժողովրդի ներկայացուցիչները միշտ սիրալիր ընդունելութիւն կը գտնեն հոս։ Թագաւորը ինքն ու իր տղան, Գալլէսի իշխանը, գրեթէ ամբողջ ժամանակը Ֆալիէրի հետ էին չորս օր շարունակ։ Էդուարդ ոչ մէկուն համար մինչև վայրաքաղ գացած է կամ կերթայ զանազան դիմաւորելու կամ ճամբու դնելու համար, սակայն Ֆրանսայի հանրապետութեան նախագահներուն համար տարբեր կերպ եղած է միշտ։

1903-ին, երբ հինգ տարի առաջ Լուբէ կայցելէր Լոնդոն, անգլիացի թերթակցի մը հետ կայարանին ներսը գտնուելու բաղդ ունէի, ուր հաւաքուած էր ամբողջ արքայական ընտանիքը՝ այցելուն դիմաւորելու, և Էդուարդ VII մօտ տասը բոպէ վեր ու վար կը շրջագայէր՝ երկաթուղիի դայտեան սպասելով։ Գիրմանիոյ կայսեր, որուն աւելի պատճառներ ունէր այդպիսի ընդունելութիւն մը շնորհելու, իբրև արենակցի, չէրաւ։ Այս երկու մեծ ու ազատասիրտ երկիրներու միջև բարեկամական այսպիսի սերտ յարաբերութեանց ամրապընդումը ժամանակի լաւագոյն նշաններէն մէկն է։ Կար ատեն մը՝ որ անգլիական մամուլի մէկ անպատասխանատու մասը թոյն կը սփռէր Ֆրանսայի դէմ։ Կային թերթեր, որ մեզ կը վստահեցնէին, թէ Ֆրանսայի միակ և միակ բաղձանքն է Անգլիան արշաւել ու անոր նաւային ոյժը ջախջախելով՝ առաջնութիւնը ինք առնել... Բայց ուրախալի է տեսնել, թէ, շնորհիւ Էդուարդի ֆրանսամոլ ընաւորութեան և իր յաճախադէպ այցելութեանց այդ երկիրը, սոյն անբան ենթադրութիւնները ոչնչացան, և այսօր չկայ որևէ զոյնի մամուլ, որ ձայն բարձրացնել համարձակի Ֆրանսայի դէմ։

—

Այսու հանդերձ, Ֆրանսայի հանդէպ տածուած այս մեծ յարգանքը պատճառ մը եղած չէ որ անոր դաշնակցին արուելիք մօտակայ այցելութեան դէմ բարձրացող բողոքը հետզհետէ սուր կերպարանք մը ստանայ հոս։

Անցեալ օրուայ թղթակցութեանս մէջ կըսէի, թէ մամուլի տեսակէտով հաւանութիւնը միահամուռ է, սակայն ժողովուրդը այնքան ալ մեծ համակրանք չունի Ռուսաստանի հանդէպ։ Վերջին օրուայ դէպքերը, զորս արդէն իմացած կըլլաք, իմ նախադուշակումս իրականութեան վերածելէ անդին ալ անցան։ Ես այդ ենթադրութիւնը ըրած էի՝ հակառակ այն իրողութեան, որ մէկ թերթ միայն համարձակած էր ձայն բարձրացնել և քննադատել Անգլիոյ թագաւորին այցելութիւնը Ռուսաստանին, իսկ այժմ խնդիրը պարլամենտի մէջ կը ծեծուի և առջի օրուան կծու վէճերէն յետոյ՝ յաջորդ շաբթու դեռ աւելին ևս պիտի լսենք։ Այս խնդիրը առաջադրողները եղան բանուորական կուսակցութեան անդամները, որոնց ձեռք կարկառած են նաև բաղմաթիւ ազատակրոն ու արմատական անդամներ, թէև պաշտօնական մարմինը այդ այցելութիւնը կը նկատէ ընդունուած etiquette մը լոկ՝ Ռուսաստանի համանման ընթացքը փոխարինելու։

Այս պահուս պարլամենտական agenda-ին վրայ երկու հետեւեալ բանաձեւերը դեռեւուած են՝ որ գալ շաբթու յառաջ պիտի գան վիճաբանութեան համար, և կը յուսամ այն ևս մանրամասն տեղեկագրել ժամանակին։

Առաջին բանաձեւ, բանուոր անդամէ, արտաքին գործոց մինիստրին ուղղուած.

«Մինթէ ծանօթ է, որ մինչև 1908 ապրիլ 19, 11 ամսուայ ընթացքին, Ռուսաստանի մէջ քաղաքական բանտարկեալներու սպանութեան թիւը 1050 է. որ 28 ամսուայ ընթացքին, մինչև 1908 փետրուար 28, առանց դատաւորութեան աքսոր ուղարկուած քաղաքական կասկածեալներու թիւը 78 հազարի կը հասնի. և մինթէ կառավարութիւնը ժողովի է յայտնել Ռուսաստանի կառավարութեան, որ սահմանադրական բարենորոգմանց համար պայքարող անձանց հետ այս եղանակով վարուիլը բրիտանական կայսրութեան ժողովրդին արդարադատ զգացումին հակառակ է։

«Մինթէ ծանօթ է, որ վերջին 12 ամսուայ միջոցին 81 բանուորական միութիւններ բռնի լուծուած են ռուս կառավարութեան կողմանէ և միութեան թերթերը խափանուած. որ վերջին յունուար ու փետրուար ամիսներուն 1246 գիւղացիներ և այլ գործաւորներ մահուան դատապարտուած են քաղաքական յանցանաց համար. և մինթէ պիտի խրատէ նորին վեհափառութիւնը եղծել իր պաշտօնական այցելութիւնը Ռուսաստանին, մինչև որ ռուս կառավարութիւնն իր խոստումը կատարէ և խօսքի ու անհատական ազատութիւն շնորհէ բոլոր անոնց, որ սահմանադրական բարենորոգմանց կը ձգտին»։

Երկրորդ բանաձեւը, կրկին ուղղուած արտաքին գործերու մինիստրին, հետեւեալն է.

«Մինթէ, Ռէվելը թագաւորին և ցարին միջև տեսակցութեան վայր ընտրած պատուն, արտաքին գործերու մինիստրութիւնը գիտէր, թէ այս տարուայ ապրիլին 25 քաղաքական յանցաւորներ դատուեցան այդ քաղաքը, որոնցմէ 5-ը սպանուեցան և 6-ն ալ տաժանակիր աշխատանքի դատապարտուեցան. և թէ, նկատի ունենալով այժմու դեռ ևս փոթորկոտ վիճակը Ռէվելի, ապահով է թագաւորին համար ցարը դիմաւորել հոն։

«Մինթէ ծանօթ է, որ 1905 և 1906 տարիներուն հաշուուած է, թէ 19,200 մարդիկ սպաննուած են սև-հարիւրեակին և ասոր գործակիցներուն կողմէ. թէ ռուս կառավարութիւնն այդ սև-հարիւրեակի 180 անդամները, պօգրոմներ սարքելու համար յանցաւոր գտնուելով հանդերձ, ազատ արձակեց. և մինթէ արտաքին գործոց մինիստրութիւնը բողոք է ղրկած իրերու այսպիսի կացութեան շարունակման դէմ»։

Գաղտնիք չէ որ այս հարցումներու մեծամասնութենէն խոյս պիտի տայ արտաքին գործոց մինիստրը՝ «ատոնք օտար երկրի մը ներքին գործերուն հետ կապ ունեցող խնդիրներ են» բանաձեւով, ինչպէս եղած է այլ պարագաներու ներքև, բայց ատոնց այսքան հրապարակ նետուելն ալ մեծ նշան է։ Միևնոյն ժամանակ, մէմօրանդում մը պատրաստուած է, որ բազմաթիւ բանուորական, ազատական, արմատական ու ընկերվարական անդամներ պարլամենտի՝ ստորագրելով պիտի ներկայացնեն թագաւորին։ Այս մէմօրանդումը կը խնդրէ, որ, եթէ անկարելի է բոլորովին եղծել այցը, գոնէ պաշտօնական գոյն չարուի անոր և այցելութիւնը կատարուի լոկ իբրև ազգակցական հոգի վրայ։

Թէ այս բողոքն ու քննադատութիւնները պիտի ապարդիւն անցնին, դէթ ներկայիս համար, ատոր տարակոյս անգամ չունինք. բայց խնդիրը բաւական սուղի պիտի նստի ազատական պատասխանատու մինիստրներուն, և իրենց «ազատական» սկզբունքները ծանր փորձութիւններու պիտի ենթարկուին այս քանի մը օրերու։

Անգլիական ժողովրդի հոգեբանութիւնը ժամէն ուսումնասիրած ըլլալով, բնաւ սխալած չեմ, երբ ամեն անգամ ալ գրած եմ թէ՝ տեղւոյն ռամկավարութեան ատելութիւնը բուռն է ռուսական կառավարութեան սխեմին դէմ։ Նոյն Էդուարդի մը ընթացքին քննադատումը շատ բան կը խօսի ինքնին։

Տարակոյս չկայ թէ ռուս ժողովրդի գիտակից մասը ծուռ աչքով կը նայի Էդուարդի և իր ազատական մինիստրութեան այս անխոհեմ քայլին վրայ, թէպէտև հեռագիրներ մեզ կը վստահեցնեն թէ ռուսական ժողովրդին ու ժամուլին խանդավառութիւնը անննկարագրելի է այս այցելութեան առթիւ։

Մամուլին՝ կը հաւատանք, որովհետև նոր չէ, որ կը սովրինք ռուսական գործերը նոյն իսկ ռուս ժողովրդին խանդավառութիւնը... Բայց անշուշտ երկրին մէջ ապրողներդ աւելի լաւ գիտնալու պատեհութիւնն ունիք։

Մինաս Ցոլակ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Մայիսի 27-ի երեկոյեան ժամը 8-ին սկսվեց կաթողիկոսական պատուիրակների և լիազօրների խորհրդակցութեան շարունակութիւնը, ուր Լէօն վերջացրեց իր զեկուցումը Մ. Իզմիրլեան եպիսկոպոսի մասին։

Վերջում նա կարդաց Իզմիրլեանից նորերս ստացված նամակը, ուր նա պարզում է իր տեսակէտները կաթողիկոսական պաշտօնի մասին ընդհանրապէս։ Որքան էլ ուշագրաւ են այդ նամակի կէտերը, բայց և այնպէս մենք հնարաւորութիւն չունենք. առաջ բերելու նրանց ներկայումս։

Այնուհետև սկսվում են առարկութիւններ Լէօի զեկուցման մասին։

Մ. Զմշկեանը ցանկութիւն է յայտնում, որ զեկուցումները միակողմանի չը լինեն։ Նա նկատում է, որ Լէօի զեկուցումից երևում է, թէ Ղալաթիայի օջախը հակառակ է եղել հայերից զինուորներ վերցնելու հարցին։ Մինչդեռ այդ օջախը ուզում էր, բայց ընդհակառակը Ֆուադ փաշայի կասկն էր պատճառը, որ ստիպեց կառավարութեան հրաժարվել այդ մտքից։ Ինչ վերաբերում է այն փաստին, որ Գէորգ կաթողիկոսը ուշադրութիւն չը դարձրեց Իզմիրլեանի դիմումի վրա,—դրա պատճառը այն էր, որ նա լաւ էր ճանաչում եւրօպական դիպլոմատիային և նախագուշակում էր ապագայում լինելիք կոտորածները։ «Ես դէմ չեմ Իզմիրլեանի թեկնածութեանը և նոյնիսկ գնահատել եմ օրացոյցիս մէջ պատկերը։ Բայց քանը նրանումն է, որ նա միամիտ էր և յետոյ միայն հասկացաւ դիպլոմատների խաղերը։

Նախագահը հարց է զարթեցնում ճառախօսութիւնները կրճատելու մասին։ Որոշվում է բաւականանալ 5 բոպէով։

Լէօն նկատում է, որ Զմշկեանը շփոթեց փաստերը։

Զերճիգեան.—Լէօի տուած տեղեկութիւնների մէջ փաստերը աղաւաղված են։ Կան պատմական սխալներ։ Իզմիրլեանի գործունէութիւնը նա բաժանեց 3 շրջանի՝ Խրիմեանի և Վարժապետեանի պատրիարքութեան օրերը, Եգիպտոսի առաջնորդութիւնը և պատրիարքութիւնը։ Լէօն ասաց, որ Իզմիրլեանը Ներսէսի հետ համախոհ էր և նրա կուսակիցը։ Ո՛չ, նա Ներսէսի հակառակորդն էր։ Ղալաթիայի օջախը, որի դեկավարներն էին Նիկ. Կիւլպենկեան, Ստեփ. Փափազեան, Քրիստոսատուր Ղազարոսեան, Հաբ. Ալաճաճեան, գործեց թէ Խրիմեանի և թէ Ներսէսի օրով և շարունակեց իր գոյութիւնը մինչև սահմանադրութեան վերջանալը։ Այդ օջախը տոկունութեամբ ընդդիմանում էր 10 տարվայ ընթացքում Ներսէսին և նրա շարքերում միակ եկեղեցականը Իզմիրլեանն էր։ Ներսէսը դրանց մի քանիսի երեսովը տուեց իրանց թշնամութեան պատճառը։ Գէորգ կաթողիկոսի մահից յետոյ, երբ, Ներսէսի պատրիարքութեան օրով, ազգային ժողովը պէտք է կազմէր ընտրելիների ցանկը և ներկայացնէր էջմիածին, մասնաժողովը, որի մէջ էր Իզմիրլեանը, 7 ընտրելիների մէջ Ներսէսի անունը չէր մտցրել։ Իզմիրլեանը ճիշտ՝ որ օժտված էր ընդունակութիւններով և մեծ հեղինակութիւն էր վայելում, վայելում է այժմ ևս։ Բայց և այնպէս, մասնաժողովի որոշման հակառակ, ազգային ժողովը Ներսէսի անունը մտցրեց այդ ցանկի մէջ։ Դրանք ես ասում եմ ապացուցանելու համար, որ Լէօն սխալվում է. Իզմիրլեանը Ներսէսի հակառակորդն էր։ Ապա ուրեմն Իզմիրլեանին պէտք է առաջ քաշել իր արժանաւորութիւններով, այլ ոչ Ներսէսի դրօշակի տակ։ Այնուհետև Իզմիրլեանին միշտ ընտրել են թեմական առաջնորդ, բայց նա ամեն ժամանակ էլ հրաժարվել է և մնացել Պոլսում։ Դա ցոյց է տալիս, որ նա պատրաստված չէր վարչական պաշտօնների համար։ Նրան ընտրեցին պատրիարք իր սրախօսութեան, ժրութեան ու եռանդի համար։ Նրա տուած ուխտը պատրիարք լինելիս՝ մի ցոյց էր կարծես։ Ազգը ընտրել էր նրան, որպէս զի կառավարի և դեկավարի, եղածը պահի ու նորերը ձեռք բերի։ Բայց նա իր անհեռատեսութեամբ ու յամառութեամբ կոնֆլիկտներ ստեղծեց, իր յարգը ձգեց, պալատից քշվեց։

«Ապա ոչ յեղափոխութեան ետևից գնաց, ոչ էլ կառավարութեան հետ հաշտ մնաց, այլ երկուսի մէջտեղ մնաց։ Լաւ արեց։ Արդեօք ազգի պատուհասների պատճառը նա չէ՞ր։ Ներսէսն էլ զործեց ազգային քաղաքական հողի վրա, բայց և հաշտ մնաց կառավարութեան հետ։ Իզմիրլեանը զուրկ էր վարչական և քաղաքական ընդունակութիւններից։ Պէտք է ուշադրութեան առնել, որ նրա չափազանց հաստատակամութիւնը հաժապատասխանում է մեր իրականութեան թէ՞ ոչ»։

Լէօ.—Ես բողոքում եմ այն նկատողութեան դէմ թէ ես փաստերը աղաւաղել եմ. Իզմիրլեանը Ներսէսի քաղաքականութեան շարունակողն էր։ Ապացոյց՝ Գէորգին ուղարկած նամակը Իզմիրլեանի ձեռքով, դեսպաններին դիմումներ անելը։ Սխալ է, որ նա առաջնորդ չէ եղել. 5 տարի Եգիպտոսի առաջնորդ է եղել։ Ինչ վերաբերում է վերջին ասվածներին, նրանք Իզմիրլեանի մասին քննադատութիւն են միայն, որին ես էլ հակառակը կարող եմ ասել։

Մելեան քահ.—Ես բաղդ եմ ունեցել 2 ամիս ապրել Իզմիրլեանի մօտ Երուսաղէմում։ Նրան ես տեսայ իբրև խորհրդական, իբրև հոգեւորական և իբրև մասնաւոր մարդ։ Նա իր բոլոր հոգով հայ մարդ է։ Եթէ նա որեւէ բանում սխալվում էլ է, նրան զեկավարողը ջերմ ազգասիրութիւնն է։ Նա չափազանց լուրջ է, հաժողմունքի մարդ է առանց կեղծելու։ Դեռ ևս Պոլսում նրա հակառակորդներից ես լսեցի խիստ քննադատութիւններ. անտանելի լինելու չափ կանոնի և օրէնքի մարդ է։ Իսկ դրամական խնդիրներում՝ անպայման մաքուր, կրօնասէր է բառի բուն նշանակութեամբ։ Այդ խոստովանում են նրա հակառակորդները ևս։ Եկեղեցական-վարչական ասպարիզում՝ թէ որքան նա կը կատարի մեր այս ցանկութիւնները՝ կասկածում եմ։ Յիշեցնում եմ նրա վերաբերմունքը դէպի պոլսցիներն, որ լուրջ կերպով ուսումնասիրել է։ Այնտեղ Իզմիրլեանը կաթողիկոսին վերապահում է «վէճոյի» իրաւունքը։ Նա յայտնի է իր երկաթի կամքով, բայց մի կուցէ այդ «երկաթի կամքը» նա գործ դնի՝ ի վնաս մեր ժողովրդի։ Դա նրա ընաւորութեան էական մասն է։ Միևնոյն ժամանակ պէտք է ասեմ, որ նա հիւանդ է։

Ապա խօսում են թեր ու դէմ՝ Տէր Ասուածատրեան և Շահրազեան։

Դրանից յետոյ ժողովը որոշում է կաթողիկոսական թեկնածուների ցուցակը կազմել վերջում։

Վերջում Գարեգին վարդապետը զեկուցեց Օրմանեան պատրիարքի անձնաւորութեան մասին, որ, իսկապէս, համառօտ կենսագրական տեղեկութիւններից էր կազմված։ Եւ տուեց նրա գործունէութեան բնորոշումը կրթական, ազգային-վարչական ասպարէզներում։ Թեկնածուների մասին հաստատութիւնները յետաձգվում են յաջորդ օրը, մայիսի 28-ին, երեկոյեան ժամը 7 և կէսին, նոյն տեղում։

Լ. Դ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Էջմիածնի սինոդի պրոկուրորի պահանջով քրէական դատ է բացված (քր. պատժ. 351, 356 և այլ յօդուածներով) Վրատանի և Իմերէթիայի հայ-լուսաւորչական թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանի և կոնսիստորիայի անդամներ՝ Եփրեմ վարդապետի, Երզնկեան, Շիրյեան, Զարդեղեան և Շերմազանեան քահանաների դէմ։ Նրանք մեղադրվում են իրանց իշխանութեան տակ, իբրև կոնսիստորիայի անդամների, եղած գումարները ապօրինաբար ծախսելու մէջ։

Թիֆլիսի 2-րդ հաշտարար բաժնի քննիչը մայիսի 26-ին կանչեց բոլորին իր մօտ ցուցմունքներ ստանալու, բացի Գարեգին արքեպիսկոպոսից և Շիրյեան քահանայից։

Մեղադրեալները յայտնեցին, որ նրանք այդ առթով դեռ անցեալ տարի գրաւոր ժանրաման բացատրութիւն են տուել էջմիածնի սինոդին և նոր լրացուցիչ բան այժմ չեն կարող տալ։ Իսկ փոդերը նրանք ծախսել են ամեն անգամ կաթողիկոսի կօնդակով։ («Т. Л.»)

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Թիֆլիսում առաջիկայ կիրակի օրը, յունիսի 1-ին, Զուբալովի ժողովրդական տանը օլորօս թատերասէրների խումբը տնում է դերասանուհի Բէլիայեվայի քսանհինգամեայ յօբելեանը։

Դերասանուհին վերջին եօթն տարիներում գործում է Թիֆլիսում, մասնակցելով օլորօսական թատերասէրների խմբերում և վայելել է յարգանք ու հաճակրութիւն հասարակութեան կողմից։

Բէլիայեվան սկսել է իր դերասանական գործունէութիւնը 1883 թուին Պոլտավայում Իսկրա ծածկանունով՝ Մերօվ Բիդիւգի խմբի մէջ։ Ապա գործել է Վասիլենկոյի և Ստարիցկու խմբերում։ Յետոյ մի քանի տարի էլ ինքն է պահել խումբը։

Թիֆլիսում նա գործում է 1901 թուից իր սեփական ազգանունով։

Յօբելեանի օրը նա կը կատարէ Կըլընայի դերը Մանկօյի «Несчастье Кахочки» դրամայում։

Սիրող

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Վաղարշապատ, 25 մայիսի

Ամսոյս 24-ի երեկոյեան էջմիածնի Դէորգեան ճեմարանի հանդիսարանում տեղի ունեցաւ գրական-երաժշտական երեկոյթ յօգուտ Կովկասեան հայոց բարեգործական ընկերութեան Վաղարշապատի ճիւղի։

Երևանից հրաւիրվել էին յատկապէս սազանդարներ և ջութակ ածողներ։ Հանդէսը բաց արեց հ. Կոմիտաս վարդապետը «Ոհ ինչ անուշ և ինչպէս զով» երգով, որից յետոյ արտասանվեցին ռուսերէն և հայերէն ոտանաւորներ։ Ապա պ. Վ. Փափազեանը կարդաց իր զրոյցներից մի կտոր, իսկ դերասան պ. Ն. Յովհաննիսեանը արտասանեց Կրիլովի «Կվարտետը» առակը թուրքերէնով հաճեցած, որ իսկապէս զուարճութիւն պատճառեց հանդիսականներին։

Առհասարակ աչքի էր ընկնում հ. Կոմիտասս վարդապետը իր ժողովրդական երգերով, նամանաւանդ «Լօ-լօ»-ով, որ ուկնդրին որոշ բաւականութիւն է տալիս։

Հանդիսարանը լցված էր խուռն բազմութեամբ։ Դէջի էր ընկնում անկարգութիւնը. պարահանդէսի ժամանակ մանր երեխաները, որոնք առանց տոմսի ներս էին մտել, նստել էին աթոռների վրա, իսկ կանայք և օրիորդներ մնացել էին կանգնած։ Չէր երևում և ոչ մի կարգ պահող։ Թ.

—

Սաբաթլու գ. (Նուխու գ.), 23 մայիսի

Այս տարի մեզանում մի չը տեսնված առատ հունձ էր սպասվում, բայց, աւաղ, գիւղացու յոյսը մնաց անկատար. ներկայ մայիս ամսի 22-ին, ժամը մէկին, տեղացի սաստիկ կարկուտ, որը տևեց կէս ժամ, փչացրեց Սաբաթլուի և հարևան Զարդաթ գիւղի արտերի մի մասը. մնասը հանում է 500 հազարի. կանանց ու երեխաների լաց ու կոծից մարդ անգամ սարսափում էր։ «Ա՜խ Աստուած, այս ինչ կրակ էր, որ թափեցիր մեզ վրա, երևի մի որևիցէ ծանր յանցանքի տէր ենք, որի համար մեզ պատժեցիր, կամ մի գուցէ այսօր Քրիստոսի Համբարձման օրն էր՝ կիրակի չը պահեցինք, որի համար մենք տուժեցինք. միթէ մեր գիւղում չը կար տան արդար, որոնց խնայէիր. ոչ. երևի չը կայ»։ Այսպէս շատ-բունակ գիւղացիք դատողութիւններ էին տալիս։

Թ. Տէր-Համբարձումեան

—

Թալիշ (Զիվանշ. գաւ.), 17 մայիսի

Այսօր մի արտասովոր երեոյթ է կատարվում մեզ մօտ, որի նմանը հազիւ թէ տեսած լինի այս շրջանը։ Մեր գաւառապետ Զանդիէրին Գանձակիից ստանում է մի շատ կարևոր պաշտօնական հեռագիր, որով խնդրում են նրան խիստ միջոցներ ձեռք առնել բռնելու յայտնի աւազակապետ Նազուն, որ այս քանի օրերը Գանձակի գաւառում մեծ ընդհարում է ունենում սարաժնիկների հետ և սպանում ու վիրաւորում է վերջիններից երեքին, և որ նա փախել է Զիվանշիր, ապա սպանվել էր ծննդավայրի շրջակայքում «Աղ-ուշուղ» անուանեալ խիտ անտառում։

Գաւառապետ Զանդիէրին, ի դէպ որ պէտք է ասել, մի հոանդուն, գործունեայ մարդ է, ինչպէս միշտ, այնպէս էլ այս անգամին միջոցներ է ձեռք առնում։

«Աղ ուշուղը» գտնվում է Թալիշ գիւղից մօտ տարածութեան վրա։

Այսօր իրիկնադէմին գիւղի հրապարակը լցվեց յիսունից աւել սպառազինված մարդկանցով, գլուխ ունենալով գաւառապետին. սարաժնիկների հետ կային նաև կամաւորներ հայերից և թուրքերից, որոնք սիրով յանձն էին առել հավակերպված ոյժով ադմինիստրացիայի հետ միասին աշխատել միանգամայն վերջ տալու այդ մարդ գազանի արիւնռուշտ կեանքին, որը քանի-քանի անմեղ արիւններ է թափել, քանի բազմանդամ ընտանիքներ է թողել որը ու անտէր։

Մի օր ու գիշերվայ ընթացքում խմբին միացան մեր շրջանից բաւական մեծ քանակութեամբ կամաւորներ, այնպէս որ հետեւեալ օրը լուսաբացին որոշել տեղը կենտրօնացաւ մի լուրջ ռազմական ոյժ։

Եկան և երկու հարիւրեակ կօզակներ, որոնցից մէկը քշում է Նրանց ընդհարման վայրից սկսած։ Արշաւախումբը մեծ օգնկով շրջապատել է անտառները՝ մի կողմը Թառեան գետը, միւսը Ղարաչայ։

Ահեղ ընդհարումներ սկսվեցին։ Ամենուրեք հրացանաձգութիւն։ Ամենուրեք ոռնոցներ։ Ամենուրեք մարդկանց ոտքերի տակ ոսկրների ճզմում։ Ամենուրեք մարդկանց գոռոցներ։ Ամենուրեք ոռնոցներ։ Ամենուրեք ոռնոցներ։ Ամենուրեք ոռն

թարմ հեռքերով փնտռում են աւազակապետին իր խմբով (ինն հոգի)։

Դրուութիւնը վերին աստիճան լուրջ է։ Թօպչ առ թօպչ սպասում ենք դէպքի վախճանին։ Հետեւանքի մասին կը գրեմ։

Սիւնեցի Լեոն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Այսօր, երեկ. ժամը 8 ին, Թիֆլիսի հասարակական գրադարանի շինութեան մէջ տեղի կունենայ կայսերական հնագիտական ընկերութեան կովկասեան բաժանմունքի նիստը, ուր պրոֆ. Մարրը կը կարդայ իր դասախօսութիւնը քիւրդական ժողովուրդների կուլտուրական նշանակութեան մասին։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը նահանգապետի ուշադրութիւնը հրաւիրել է այն հանգամանքի վրայ, որ վերջին ժամանակներս Թիֆլիսում մթերքները շատ թանգացել են շնորհիւ միջնորդ-վաշխառուների, որոնք, էժան առնելով ձեռքներն ընկածը շինականներից, շատ թանգ գնով վաճառում են խանութատէրերին։ Այդ անբնական երեւոյթը առաջն առնելու համար ոստիկանապետն առաջարկում է ոստիկանական հսկողութիւններ սահմանել 1) Կօջորի ճանապարհին, 2) Կախէթինսկի ճանապարհին Հալաբարի կողմից և 3) Երեւանեան ճանապարհին Օրթաճալայի կողմից և իւրաքանչիւր տեղում կանգնեցնել երկու-երկու քաղաքացիներ։ Սրանց պարտականութիւնը այն կը լինի, որ առաւօտեան շատ վաղ դուրս կը գան այդ տեղերը, օրինակ ժամը 4-ից, և կարգելեն վաշխառուներին գնել գիւղերից բերված մթերքները։ Նոյնը նրանք կանեն և երեկոյեան։ Թիֆլիսի նահանգապետը, հաղորդելով ոստիկանապետի առաջարկութիւնը քաղաքագլխին, խնդրում է իր կողմից այդ հարցը ներկայացնել դումայի քննութեան և նոր գումար յատկացնել վեց աւելորդ քաղաքապահների պահպանութեան համար։

◆ Թիւէթի ուխտատեղիում, տօնի օրը, անյայտ մարդիկ ներս խուժելով եկեղեցին՝ յաւշտակել են փողերով լի գանձանակը։ Գող պարզված չէ դումարի քանակութիւնը։ Բայց ինչպէս ենթադրում են, մեծ է լինելու։

◆ Թիֆլիսի մոդովարանի աւազների խորհուրդը վարձով մի վարժուհի է հրաւիրել երեխայական խաղեր և այլ զուարճութիւններ կազմակերպելու համար ամարային շինութեան մէջ։

◆ 1907 թ. օգոստոսի 30-ից մինչև 1908 թ. մայիսի 4-ը Թիֆլիսի Աւճալեան թատրոնում մշտական սիրողների խումբը տուել է 35 ներկայացումներ, որոնցից ընդամենը մուտք ունեցել է 1332 ր. 34 կ., իսկ ծախք՝ 1267 ր.։ Մնացած 65 ր. 34 կոպէկով սիրողների խումբը վերանորոգելու է շինութիւնը և կանոնաւորելու բեմը։

◆ Ստացանք Բաֆֆու «Խնթի» ռուսերէն թարգմանութիւնը, որ կատարել է պ. Կարա-Մուրզան։ Գրքի գինն է 1 ր.։ Սկզբում գրված է մի առաջաբան՝ հանդուցեալ վիպասանի մասին և նրա պատկերը։

◆ Երկուշաբթի, մայիսի 6 ին, Թիֆլիսի սանիտարական-բժշկական տեսուչ պ. Ստեփանեանի նախագահութեամբ կայացաւ քաղաքային սպանդանոցի փէլդշերների և անասնաբոյժերի խորհրդակցութիւնը, ուր մշակվեցին մի քանի կանոններ՝ անասուններ մորթելու, (ամառ ժամանակ) ծառայողների գալու ժամանակի վերաբերեալ և այլն։

◆ Շուշու գաւառի Բիրսի լեռներում գտնվել են մի աւազակախմբի հետքերը։ Երկրորդ օրն է, որ հրացանաձգութիւն է տեղի ունենում։ Սպանված է մի պահակ, վիրաւորված է միւսը։

◆ «Վտակ» թերթը հաղորդում է, որ մայիսի 26-ին Ալէքսանդրօպոլում ամբոխը ներս է խուժել «Ժայռ» թերթի խմբագրատունը և հայհոյել ու ծեծել խմբագիր Յովակիմ Բուդաղեանին, պահանջելով յայտնել թէ ով է գրել այդ թերթի № 45-ում մի յօդուած, որի մէջ իբրև թէ հերքվում է Աստուծու գոյութիւնը։ Մենք անպայման դատապարտում ենք այդպիսի վայրենի քոնութիւնները, բայց չենք կարող և չը յիշեցնել հայկական առածը՝ «Ինչ որ սերմանեցիր, այն ես հնձում էք այսօր»։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը արգելել է ձուկ որսալ Կուր գետում։

◆ Մայիսի 30-ին Մուշտայիդի այգում առաջին անգամ տեղի կունենայ մի զբօսանք յօգուտ Թիֆլիսի մանչերգական դպրոցի։

◆ Թիֆլիսի քաղաքային սպանդանոցում մանր անասունները գաղտնի մորթելու ադաչն առնելու համար վճռված է այսուհետև փոխանակ ինքը խփելու՝ նրանց վրա պլօմբ դնել։

◆ Թիֆլիսի քաղաքային բժշկական-սանիտարական տեսուչ պ. Ստեփանեան մայիսի 27-ին քաղաքային վարչութեան ներկայացրեց սանիտարական-բժշկական մասի վերակազմութեան նախագիծը, որ բաղկացած է մօտ 400 երեսից, տպված բեմինդոտնի վրա։ Այդ նախագիծը կազմելու համար սան.-բժշկ. խորհուրդը նուիրել է 40 նիստ։

◆ Վերջին ժամանակներս Թիֆլիսում վերստին երևացին թծաւոր տիֆի հիւանդութեան հատ-հատ դէպքեր։ Հիւանդանում են գլխաւորապէս Քութայիսի նահանգից եկողները։ Ուրիշ վարակիչ հիւանդութիւններ բարեբաղդաբար քաղաքումս չը կան։

◆ Այսօր տեղի կունենայ Թիֆլիսի սանիտար. բժշկ. խորհրդի նիստը, ուր քննվելու է հիւանդանոցների, ապաստարանների, անկելանոցների սան.-բժշկ. մասի ծախքերի նախահաշիւը։

◆ Թիֆլիսաբնակ իտալացիների մէջ միտք է յղացել իտալական կլուբ հիմնել Թիֆլիսում ընթերցարանով, որից օգտվեն իտալացի բանւորները։

◆ Լուսանկարիչ Գրիգոր Տէր-Ղևոնդեանը խնդրում է մեզ յայտնել, որ Թիֆլիսի ժողովարանից արձակված Գ. Տէր-Ղևոնդեանի հետ նա ոչ մի կապ և առնչութիւն չունի։

◆ Թիֆլիսում նիստեր է գումարում կովկասեան փոխարքայութեան նահանգական և շրջանային ժանդարմական կառավարութիւնների կառավարիչների համագումարը։

◆ Թիֆլիսի նահանգական ատեանը որոշել է նկատողութիւն անել Թիֆլիսի քաղաքային դումայի նախկին քարտուղար Սեմէօնովին, որ նա իր ժամանակին չը ներկայացրեց քաղաքի այս տարվայ ծախքերի և եկամուտների նախահաշիւը Թիֆլիսի արքունական պալատի կառավարչին։

◆ Գօրու գաւառապետի գլխաւոր օգնական իշխ. Կարալօվը նշանակված է Թէլաւի գաւառապետի պաշտօնակատար։

◆ Կարսի շրջանի Կաղզուանի վիճակի կառավարիչ գնդապետ Հաշիմբէկօվը նշանակված է Կարսի շրջանի զինուորական նահանգապետի օգնական. փոխ-գնդապետ Դաուէշկէլիանին նշանակված է Դաղստանի շրջանի զինուորական նահանգապետի օգնական։

◆ Նորերս վախճանված բժիշկ Գզելիեվի այրուն քաղաքը որոշել է 500 բուբլի նպաստ տալ։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ Դաղստանի շրջանի զինուորական նահանգապետ գեներալ Ալիխանի փոխարէն, ինչպէս հաղորդում են արժանահաւատ աղբիւրից, նշանակվելու է Կարսի շրջանի նախկին զինուորական-նահանգապետ գեներալ-մայոր Վոյլոկին։

◆ Տատարսկայա փողոցի վրա գտնվող № 115 տան տանտիրուհի տ. Դիւֆելդը, որի բնակարանում գտնվել էր ռումբի պահեստը, հաղորդել է կարևոր գործերի քննիչ Մօզդուխովին, որ իր բնակարանում էլի մեծ թուով ռումբեր պատրաստելու գործիքներ, որոնք չեն գտնված խուզարկելիս։ Այդ մասին քննիչը իսկոյն տեղեկացրել է ի դիտութիւն ոստիկանութեան, որը կրկին անգամ խուզարկելով՝ գտնում է մի ամբողջ արկղ։

◆ Մայիսի 26-ի առաւօտեան գնացքով Բագուի առևտրական դպրոցի սանները ուղևորվել են երկու շաբթվայ ճանապարհորդութիւն կատարելու ընդհանրական ուսուցիչ Վ. Սրեմինի և հայոց լեզուի ու պատմութեան ուսուցիչ Ա. Բալայեանի ուղեկցութեամբ։ Աշակերտների թիւը 20 է։ Այդ ճանապարհորդութեան նախաձեռնող Բալայեանին աջողվել է մասնաւոր անձանց շրջանում հանգանակել 500 բուբլի այդ նպատակը իրագործելու համար։

◆ Մայիսի 25-ին, գիշերվայ ժամը 1-ին, երեք անյայտ չարագործներ կառքի մէջ նստած սրարշաւ անցնում են Շամխայա փողոցով՝ ժանդարմների երկու ունտեր-օֆիցէրների մօտից և սկսում են ատրճանակներից կրակել դէպի վերջիններս։ Ժանդարմները, գօրօդօլօյների հետ միասին կրակելով, հետամուտ են լինում փախչողներին, որոնց դէմ 4 րդ Պարալելնի փողոցում պատահաբար դուրս են գալիս մի քանի կօզակներ օֆիցէրի հետ միասին և բրնում կառքի մէջ նստողներին։ Վերջիններիցս մէկը անյայտացել էր։ Կալանաւորվածները երկուսն էլ հարբած են եղել և բացատրել են, որ փախչող ընկերն էր կրակողը։ Սակայն կառապանը վիրաւորված է աջ ոտից։ Յաջորդ օրը ոստիկանութիւնը գտնում և կալանաւորում է երրորդ ընկերոջը ևս, որը դուրեցի Ակիմ Կօրգանօվն է եղել։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Մայիսի 21 ին Ի. Պ. Սուվօրինը ուղարկել է Մօսկվայի քաղաքային վարչութեանը 300,000 բուբլի, որի տոկոսները պէտք է բաժանվեն աղքատներին Մոսկվան և Զատկի տօներից առաջ։

◆ Դվինսկից հեռագրում են «Рус. Сл.» լրագրին, որ տեղական բերդի արտիլերիական պահեստից գողացվել են հարիւր ատրճանակներ։ Պահապանը, նկատելով փախչող չարագործներին, սկսում է գնդակ արձակել նրանց վրա։ Փախչողներից մէկը սպանվում է, իսկ միւսները, ձգելով գողացած ատրճանակները, կարողանում են փախչել։ Քիչ ժամանակից յետոյ չարագործներից մի քանիսը վերադառնում են սպանվածի դիակը տանելու, բայց վրա հասնող պահակները կալանաւորում են նրանց բոլորին։

◆ Վոլգայից հեռագրում են «Р. Сл.» լրագրին, որ քաղաքում ճարակում է ծծաւոր տիֆը։ Վերջին շաբաթվայ ընթացքում հիւանդացել են 119 հոգի։ վարակիչ բարակները լցված են։ Ծծաւոր տիֆը համաճարակում է գաւառում ևս։

◆ Ռոստովից Դ./վ. հաղորդում են, որ աշնան ցանքերը սաստիկ երկիւղ են ներշնչում։ Դաշտերում երևան են եկել ՃԱՍԱԿԱՐ բզեզներ։ Հարկ կայ ագրօնոմների խորհրդակցութիւն հրաւիրելու այդ բզեզների դէմ մէջոցներ մշակելու նպատակով։ Սիմֆերոպոլից անմխիթարական տեղեկութիւններ են ստացվում նահանգի ցանքերի մասին. անձրևներ չը լինելու պատճառով շատ տեղերում ցանքերը ոչնչացել են։ Նոր-պիսի լուրեր ստացվել են և Եկատերինոսլաւից. այդ շրջանում ևս չորային է եղանակը. արդէն մի քանի շաբաթ է, որ անձներ չեն գալիս, խոտերը խանձվել են, աշնանացանները՝ ամէն տեղ ոչնչացել։

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ախալցխա, 11 մայիսի

«Վտակ» լրագրում մի ոմն «Michel» ստորագրութեամբ «Դաւառից թուղթակ տպաւորութիւններ» խորագրով *) յօդուածը սկզբից մինչև վերջը կեղծութիւնով ու պրովոկացիայով է շաղախված։ Յօդուածագիրը այնքան «զօրա» է, որ արևի լոյսի տակ, ամենքի աչքի առաջ կատարված ճշմարտութիւնը հաստակում է կեղծել, խեղաթիւրել...

Յարձակվելիս չէ ժոռացել և մեր «սիրողների մշտական խումբը», գրելով «Վտակ» № 91-ում, թէ «...Դուք կը տեսնէք մի քանիսին, որոնք ինտելիգենտներ են և զանազան եարլիկներով ծածկված մի խումբ աղտների հետ առանձնացած կլուբի դահլիճում մենաշնորհ են դարձրել ժողովրդից անջատ ներկայացումներ տալ մի խումբ «աղտների», «կօլլեգների» համար (ընդգծումը մերն է)։ Իսկ արհեստաւորը, չարքաշ տարրը դրսից միայն նայող է և արտօնված չէ կլուբի շինութեան մէջ մտնելու...» (!?)

Մի ստոր պրովոկացիա, որ յատուկ է Michel ներին և Меншиковъ ներին... Սակայն եթէ նա իրան մոլորեցնող և թեւադրող սև բանակին այնքան չը հաւատար և ազնւաբար (եթէ նրա մէջ կայ մի նշոյլ անգամ) վերաբերվէր իրականութեանը՝ անշուշտ կը խոստովանէր, որ մեր սիրողների խումբը հիմնված է միմիայն ժողովրդական ներկայացումներ տալու և ամէն տարի տուել է այդպիսիները։ Հէնց այս տարվայ թատեր. սեզօնին խումբս տուել է 12 ներկայացում՝ 6-ը Կարապետեան դպրոցի դահլիճում և 6-ն էլ կլուբում։ Որոնցից ինը միմիայն ժողովրդեան համար են տրված, որոնք են՝ «Բաղդասար-աղբար», «Կրեչինսկու հարսանիքը», «Պէպօ», «Խանում», «Երկրորդ երիտասարդութիւն», «Տրիլբի» (2 անգամ), «Վերաքննիչ» և «Եգինէ»։ Սրանցից նոյնիսկ երեքը՝ «Պէպօ», «Խանում» և «Երկրորդ երիտասարդութիւն», տրվել են ամենաէժանագին գներով—15 կօպ.—20 կօպ., ամենաչքաւոր դասի համար։ Իսկ մնացած երեք ներկայացումները՝ «Երեկոյեան շեփոր», «Դօն Սեզար դը Բազան» և «Երկրորդ երիտասարդութիւն» տրված է կլուբում միմիայն անդամների համար, որտեղ խումբս մասնակցել է որոշ պայմանով—կլուբի բեմի և նրա վարձած դերասանի իրաւունքներից օգտվելու՝ ժողովրդական էժանագին ներկայացումները աջողեցնելու համար։

Եթէ յօդուածագիրը մի փոքրիկ լրջմտութիւն և ամօթի ու պատկառանքի զգացմունք ունենար՝ նախ կը գիտակցէր իր մոլորութիւնը իր թայֆաներից և ապա ի հարկէ «բարոյապէս պարտաւորված» կը լինէր իր յօդուածի վերջում էլ աւելացնել. «...Եւ այդ «կարժիրները» նոյնպէս ժողովրդասէրներ են», տարիներով այդպէս հաւատացող, այդպէս համարվող...

Բարքերի այլասերում... և ուրիշ ոչինչ։

Ախալցխայի սիրողների մշտական խմբի անդամներ՝

Պօղոս Մակարեան, Ա. Ներսիսեան, օր. Ս. Գալաչեան, Լեոն Հէպիպեանց, օր. Գոհարիկ Ղազարիշեանց, Ա. Ղազարոսեան, Գ. Յովսէփեան, Ե. Քիւրքչեան, Խաչ. Տէր-Ենօքեան, Մ. Բագրատունի, Ս. Մ., Ս. Կլայէկչեան, Գր. Ինճիկեան, Գէորգեան, Գ. Տէր Յակոբեան, Գ. Տ. Կարապետեան, Յ. Սաղոյեանց։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Էրնեստ Ռենան, «Յիսուսի կեանքը», թարգմ. Վ. Վարդանեանի, 209 երես, գինն է 1 բուբլի։ Թիֆլիս, տպարան «Էպօխա», 1907 թ.

«Յիսուսի կեանքը», որը արդէն լոյս է տեսել եւրոպական բոլոր լեզուներով, թարգմանված է ռուսերէնից. իսկ վերջինս էլ Ռենանի ֆրանսերէն հանրամատչելի հրատարակութիւնից, որը հեղինակը լոյս է ընծայել մի քանի ոչ էական կրճատումներով, յարմարեցնելով նրան յատկապէս ժողովրդական խաւերի համար։

Այդ տեսակէտից սոյն աշխատութիւնը իր լեզուի դիւրընթացութեամբ, պարզութեամբ և բանաստեղծական գրաւչութեամբ անհամեմատ բարձր է, քան նոյն հեղինակի առաջին ընդարձակ հրատարակութիւնը, քան Շտրաուսի նոյնանուն գիրքը, որ լոյս է տեսել Ռենանի գրքից տասնեակ տարիներ առաջ։

Ռենանի այս գիրքը, «Յիսուսի կեանքը», որը գրված է 1862 թուականին, իսկապէս ծնունդ առնող քրիստոնէական պատմութեան հովւերգութիւնն է, որ առաջին անգամ հիւսել է Գալիլիայի գեղածիծաղ բնութեան մէջ ապրող ժողովրդի վառ երեւակայութիւնը։ Նա է ստեղծել այն գեղեցիկ իդէալը, որ փայփայում է իր մէջ մարդկութեան ապագան։

Իր ներկայ գրքով հեղինակը նպատակ է ունեցել պատմական-փիլիսոփայական բընական տեսութեամբ պարզաբանել քրիստոնէական պատմութեան բուն աղբիւրը, երեւան հանել ճշմարտութիւնը և լուսաբանել առասպելական զարձած փաստերը։ Իր այդ նպատակին հասնելու համար նա չէ բաւականացել միայն հին ու նոր ուխտի լուրջ ուսումնասիրութեամբ, այլ, անձամբ ճանապարհորդելով Պաղեստին, տեղն ու տեղը դիտել ու մանրազնին ուսումնասիրել է այն բոլոր վայրերը, ուր ապրել ու գործել է Յիսուս, և վառ գոյներով պատկերացրել է իր նկարագրութիւնների մէջ։

Ահա այդ տեսակէտից Ռենանի «Յիսուսի կեանքը» գիտական մեծ արժանաւորութիւն ունի և, չը նայելով որ հալածանքի ենթարկվեց, հեղինակի դէմ զինեց ժամանակից կղերը, հերետիկոսական ոչինչ չէ պարունակում իր մէջ։ Ընդհակառակը, նա վերաբերվում է դէպի մարդու որդի Նազովրեցի Յիսուսը նոյնպիսի պատկառանքով ու ջերմ հիացմունքով, ինչպէս և ամէն մի ճշմարիտ հաւատացեալ։ Բայց նա աքանչանում է աւետարանի բարոյագիտութեամբ, առանց ցնորքների ու մոլորութիւնների։ Նա պատկերացնում է Յիսուսին իբրև մի կատարեալ իդէալիստ, որի «երազն էր՝ ժողովրդի բոլոր դասակարգերը վերափոխող ընդարձակ հասարակական յեղափոխութիւնը, ինչպէս և իշխանութեան գլուխ կանգնած մարդկանց ընկճումը»։

Նա բառի ամենավեհ նշանակութեամբ յեղափոխիչ էր. նա թողեց ազգայինը, հրաժարվեց մոլութիւններից և անցաւ համամարդկային գաղափարին, հաստատեց համամարդկային կրօն, որի հիմքը ոչ թէ արտաքին կապն է, այլ զգացումը և իրաւահաւասարութիւնը։ Մինչև մահվան վերջին րոպէն էլ Յիսուսը մնաց խղճի ազատութեան իրաւունքի հիմնադիրը, բարոյական և գաղափարական կատարելութեան գերագոյն տիպարը, որ գիտէր հմայել իր բանաստեղծական հանճարով։

«Այդ վեհ անձնաւորութիւնը,—ասում է հեղինակը,—որ մինչև հիմա էլ վարում է մարդկութեան բաղդը, թող թոյլատրվի մեզ անուանել՝ աստուածային, ոչ այն մտքով, որ Յիսուս իր մէջ ժողովել էր բոլոր աստուածային յատկութիւնները կամ Աստուած էր, այլ այն մտքով, որ նրա շնորհիւ մարդկային ազգը աստուածայինի ճանապարհով զործեց ամենամեծ առաջադիմութիւնը։

«Յիսուս ամենաբարձրն է այն սիւներից, որոնք մարդուն ցոյց են տալիս, թէ որտեղից են գալիս մարդիկ և ուր պիտի դիմեն։ Նրա մէջ կենտրոնացել է այն ամենը, ինչ որ կայ մարդկային բնութեան մէջ ամենալաւ և ամենամեծն»։

Ահա այն վերաբերմունքը, որ ցոյց է տալիս հեղինակը դէպի քրիստոնէութեան մեծ վարդապետը։ Այն գերմարդկային ծագումը, որ վերագրվում էր Յիսուսին, բընականաբար հանդիսանում է իբրև առասպել և գեղեցիկ կերպով հերքվում է։

Հայերէնի թարգմանութեան պահանջը պէտք է ասել որ մեղանում վաղուց էր զգացվում, ուստի բոլոր սրտով ողջունում ենք նրա հրատարակութեան։ Թարգմանութեան ոճը թեթև է և լեզուն դիւրընթաց, միայն պէտք է ցաւել, որ գրքի մէջ տպագրական վրիպակներ շատ կան, մինչդեռ վրիպակների ցանկը չը կայ. այդ անհրաժեշտ էր։

Գրքի տպագրութիւնը լաւ տպաւորութիւն չէ թողնում մանրատառերի ու թղթի վատութեան շնորհիւ։

Գինը փոքր ինչ թանգ է նշանակված։

Աշխատակից

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

—

◆ Ադաբազարի երկաթուղագիծը Արմաշ երկարաձգելու համար Դպրեվանքին կողմէ ի մօտոյ դիմում պիտի ըլլայ երկաթուղոյ վարչութեան։

◆ 1884 ին՝ պոլսեցի Կիւմիւշեան անուանով հայ մը, որ Հնդկաստանի մէջ վաճառականութիւն կընէր, Լոնդոնի մէջ մեռած է։ Ցիշելը իւր ժառանգորդներուն 7 միլիոն անգլիական ոսկի թողած էր անգլիական դրամատունը. մինչև վերջերս ոչ մէկ ժառանգորդ երևան չելլելով, այդ դրամին տոկոսները իրար վրայ բարդուելով հասած է 15 միլիոն անգլ. ոսկիի։ Այս մօտերս պերացի 50 տարեկան օրիորդ մը կարդ մը վաւերաթղթերով կընայ ներկայանալ, թէ ինքը միլիոնատէր հայուն եղբօրը աղջիկն է և հետևաբար 15 միլիոնին օրինաւոր ժառանգորդը։ («Իր.»)

ՆԱՄԱԿ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻՑ

—

Նոր-Զուղա, 1 մայիսի

Լսում ենք, որ Իշխան Զելլի Սուլթանը հանգիստաւոր կերպով մուտք է գործել Շիրազ և փառաւոր ընդունելութիւն է գտել քաղաքի բնակիչներից։ Թեմիս օրբազան առաջնորդը, ինչպէս լսում ենք, էջմիածինը թողել է և արդէն հասել է Բաշտ։

Նոր-Զուղայի ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի հիմնադրութեան 50 տարին լրանում է այս տարի։ Առաջնորդի փոխանորդ գեր. Բագրատ վարդապետ Վարդազարեանը, ազգային երկսեռ դպրոցի հոգաբարձութիւնը և ուսուցչական կազմը մտադիր են տօնել այդ 50-ամեակը ըստ կարելոյն շքեղ կերպով և աշխատում են այդ առիթով հանգանակութեամբ կազմել մի «անձեռնմխելի դրամագլուխ», նոյն դպրոցի անուանով, որովհետև այդ դպրոցի դրամագլուխը շատ աննշան գումար է և եկամուտը անհամապատասխան՝ աւելացող ծախքերի և անհրաժեշտ պէտքերի հետ։ Արդէն ընտրվել է մի յանձնախումբ, տօնի օրը նշանակվել է մայիսի 25-ը. ինչպէս լսում ենք, հոգաբարձութիւնը արդէն ժամանաւոր նամակներով և տպված կոչերով դիմել է Հնդկաստանում և Զավայում ընակվող Նոր-Զուղայեցի հարուստներին և բարեգործներին նպաստելու անձեռնմխելի դրամագլուխ կազմվելուն։ Ցոյս ունենք, որ մեր հայրենակիցները՝ ի նկատի ունենալով Պարսկաստանի ամենահին հայկական օրիորդաց դպրոցի մատուցած ծառայութիւնը և կարևորութիւնը մեր վերածնութեան գործում չեն զլանալ իրանց նիւթական և բարոյական աջակցութիւնը, նոյն դպրոցը հաստատուն հիմքերի վրա դնելու համար։ Նախաձեռնողներին մաղթում ենք կատարեալ աջողութիւն։

Ապրիլի 20-ին կենտ. դպրոցում տեղի ունեցաւ գրական-երաժշտական երեկոյթ ի յիշատակ Պերճ Պռոշեանի և Սեմսոն Շահգալդի. մուտքը յատկացվել է Պռոշեանի ընտանիքին. արդէն փոխանցվել էր 100 բուբլի։ Բագրատ հայր-տուրքի առաջարկութեամբ, հանգանակութիւն է հաւաքվել Լէօի և Մ. Փորթուգալեանի անունով։

Բարձր. Բագրատ վարդապետի նախաձեռնութեամբ կազմվել է մի գրական-կրթական ընկերութիւն, որի նպատակն է նեղ-պաստել նիւթապէս և բարոյապէս Նոր-Զուղայի ազգային դպրոցներին, դարձ տալ թատերական գործին և նիւթապէս ապահովել և աւելի ընդարձակել արդէն գոյութիւն ունեցող «Բաֆֆի» ընթերցարան-գրադարանը, նպաստել նոյնպէս հայաբնակ գիւղերի դպրոցներին և աշխատել բանաստեղծները և հրատարակել դասագրքեր և հանրամատչելի գրքեր։ Ինչպէս լսում ենք, այս ընկերութիւնը պաշտօնապէս բացվելու է ս. Կատ. օր. դպրոցի 50-ամեակի հանդիսի օրը։ Արդէն բաւականաչափ անդամներ գրվել են երկու տեսից։

Նոր-Զուղայեցի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

27 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական պաշտպանութեան գուժայական ժանտաժողովը արգելք չը դաւ հատատելու Սեբերի երկրորդ երկաթուղագիծ կառուցանելու նախագիծը։

ՏԻՆԱԿՍԿԵԱՅԱ ԳՐԵԱԶԱ։ (Պ...տատանական)։ Բժշկական սէզօնը բացվեց։ Եղանակը շատ լաւ է։

ՄՕՍԿՎԱ։ Տեղս եկան անգլիական բանկերի ներկայացուցիչները, որոնք բանակցութիւններ են վարում կրկին 12 միլիոնի քաղաքային օբլիգացիաների փոխառութիւն կապելու համար։

ՕԴԵՍՍԱ։ Վախճանվեց Բիւատաքի Ներքոռուս-Թիւրքական պատերազմին մասնակցած գեներալ Պերիէշինը, որ երկար տարիներ Օդեսայի նահանգապետ կատարիչն էր։

ԿԻԵՎ։ Մեստկոյուղու ծխախոտի ֆաբրիկայում քանօրեայ գործադուլից յետոյ աշխատանքները վերսկսվեցին։ Բանւորների պահանջներին բաւարարութիւն չը տրվեց։

ԿՕՍՏՐՕՄԱ։ Զորս յատուկ նաւերով տեղս եկան միջազգային նաւատորմիղների կօնդրէսի անդամները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱԼԵԱՆ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Տափի-Քարի (Քամոյեան) ս. Գէորգ եկեղեցու հոգաբարձութիւնը պատիւ ունի հրաւիրելու ժեծարգոյ ծխականներին տարեկան ընդհանուր ժողովի, որը նշանակված է յունիսի 1-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին ս. Նշանի դպրոցում։

Ընդհանուր ժողովի զբաղմունքներն են՝

1. Եկեղեցու 1907 թ. գործունէութեան հաշուետուութիւնը, վերատուգիչ յանձնաժողովի զեկուցման հետ միասին։

2. 1907 թ. հաշուի և ներկայ 1908 թ. նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը։

3. Պաշտօնեաների գործավարութեան առիթով տեղի ունեցած թիւրիմացութիւնները պարզելը։

Այս ժողովը համարվում է երկրորդ և օրինական՝ չը նայելով ներկայ պանվող անդամների թիւին։

(Հ. ու. շ. ա.) 3—1

---

*) Այն միտքը, որ նմանօրինակ յօդուածները միայն մոլորեցնում ու շահագործում են հասարակութիւնը յօգուտ սև ոյժերի՝ ստիպեց մեզ ուղղել այս հեղգում-պատասխանը։ Թէև ըստ սովորութեան մենք պարտական էինք սոյն պատասխան-բողոքը ուղարկել «Վտակին», որտեղ տպված է Michel-ի նամակը, սակայն նախկին փորձերից համոզված ենք, որ «Վտակի» խմբագրութիւնը չէ. սիրում իր «անխալական» թղթակիցների կեղծութիւնը հրապարակ հանել. ուստի դիմում ենք «Մշակին» և խնդրում որ տպագրէք։

Սիրողների խումբ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Բ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։

ՆԵՐԿԱՅՈՒՆԵՐԸ

Ա. Բ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Զաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդացողի վերատեսչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Մեկնեց կովկասեան հանքային ջրերը և անցեալ տարիների նման ընդունելու է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հէլբանոց «Ռոսսիա»։

(ա. օ.) 100—60

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնն ամեն օր

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելեամինովսկայա փողոց № 8.

(ե. հ. շ.) 100—71

ԲԺՇԿԱՊԵՏ

Վ. ԱՐԾՐՈՒՆԻՆ

մեկնեց Պեատիգորսկ (Կովկ. հանք. ջրերը)։

Հասցէն՝ Верхній бульваръ д. кн. Гирей.

10—10

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ պատենտ

ՀՐԱՇՔ-ԽՈՀԱՆՈՑ № 24888

„ՄԻԿՐՕ“

Վարձատրված է մեղալով տնային տնտեսութեան ցուցահանդէսում, Անտվերպէնում, 1907 թ.։ Շատ օրիգինալ և գործնական նորահնար գործիք, որ պարունակում է հետեւեալ առարկաները. 1) Ապպարատ խոհանոց, չոր, յաւիտեան չը փչացող մաստայով, որի շնորհիւ ապպարատ խոհանոցը վայրկենապէս վառվում է և այրվում է զօրեղ բոցով, առանց մուրի և վառ հոտի. ծախսվում է 1 կ. մէկ ժամում. միանգամայն անվտանգ։ 2) Սիրուն պղնձէ աման աֆրիկ. արծաթ-ալյիումինի կոթով։ 3) Նոյնպիսի թավա։ 4) Գործնական սրճաման։ 5) Դալ-թէյաման մակադիր արծաթից։ «Խոհանոց-Հրաշքը» անհրաժեշտ է իւրաքանչիւր կարգված և անպակաս մարդուն։ Գ. պ. օֆիցէրներին անփոխարինելի է պատերազմի ժամանակ։ «Խոհանոց-Հրաշքը», շնորհիւ այն բանի, որ ծալվում է, ճանապարհորդական իսկական գործնական խոհանոց է։ Ամբողջ ապպարատը գինը իր մասերով 3 ր., 3 հատ՝ 8 ր. 40 կ.։ Ուղարկելու համար 45 կ.։ Ասիական Ռուսաստան 65 կ.։

Հասցէ. Фабрика М. А. Кадлубокъ, Варшава, Кармелицкая 9.

Գրագրութիւնը ռուսերէն և գերմաներէն լեզուներով։

(13, 29) (8930) 2—2

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

գրախանութում վաճառվում են

1) Ա-Դօ, «Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում» (1905—1906 թ.) (փաստական, վիճակագրական և տեղագրական մանրամասն լուսաբանութիւններով) 464 մեծադիր երեսներ, գինն է 1 ր. 50 կ., պօստի ծախքով 1 ր. 80 կ.։ Կան և կազմած՝ զանազան գնանոց։

2) «Հայաստանի քարտէզը», ԺԸ տպագրութիւն, գունաւոր, կպցրած կտակի վրա, գինն է 50 կ., պօստի ծախքով 85 կ.։

Գումարով գնողներին զեղչով։

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“, Г. И. Галустянцу.

(շ. չ. ու.) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

ծանուցանում է, որ լիազօրների ժողովի շարունակութիւնը, որ սկսված է ներկայ մայիսի 25-ին, կը կայանայ ներկայ մայիսի 31-ին, շաբաթ օրը, երեկոյեան ժամը 7 և կէսին, ընկերութեան տան մէջ։

Պուշկինսկայա փողոցի վրա

ՁԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

1) Պաշտօնատար անձանց ընտրութիւնները՝ ա) մի դիրեկտօրի, ծառայութեան ժամանակամիջոցը լրանալու պատճառով հեռացողի փոխարէն. բ) վերահսկիչ մանաժողովի երկու անդամների, ծառայութեան ժամանակամիջոցը լրանալու պատճառով հեռացողների փոխարէն,—Ա. Պ. Զաւրիեվի և Զ. Ի. Եղիազարօվի. գ) մի կանդիդատի, դիրեկտօրի պաշտօնի համար, ծառայութեան ժամանակամիջոցը լրանալու պատճառով հեռացողի փոխարէն, իշխ. Վ. Մ. Թուժանօվի և դ) վերաստուգիչ յանձնաժողովի երեք անդամների։

2) Վերահսկիչ մանաժողովի միացեալ ատեանի զեկուցումը Թիֆլիսի քաղաքային կրէդիտային ընկերութեան 25-ամեակը յաւերժացնելու մասին։

3) Թիֆլիսի քաղաքային կրէդիտային ընկերութեան թոշակարկղի կանոնադրութեան նախագծի քննութիւնը, որ մշակել է առանձին յանձնաժողովը։

4) Վերաստուգող մանաժողովի և վարչութեան միացեալ ատեանի զեկուցումը կանոնադրութեան § 104-ի փոփոխութեան հարցի առիթով։ 1—1

Առաջիկայ դպրոցական տարվայ ընթացքում իմ դասագրքերս պիտի վաճառվեն հետեւեալ պայմաններով.

1) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ ա. տ., նոր տիպ. բազմաթիւ նոր պատկերներ. գրութեան նոր օրինակներ տպագրին գուգընթաց. ու, իւ, յ տառերի համար նորաձեւ տառեր, որոնք փարատում են բոլոր դժուարութիւնները. գինը 20 կոպէկ. գումարով 13 կոպէկ։

2) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ երկրորդ տարի, նոր տիպ. գինը քառասուն կոպէկից իջեցրած է 30 կոպ., գումարով 20 կոպ.։

3) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ երրորդ տարի, նոր տիպ. բովանդակութիւնը ճոխացրած. հայկական մասը բոլորովին վերամշակված (նիւթեր հայի առտնին կեանքից, սովորութիւններից, աւանդութիւններից, գիւղացական կեանքից և այլն). գինը 50 կ., գումարով 35 կոպ.։

4) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ չորրորդ տարի, ազգային բաժնով (նիւթեր հայի անցեալից ու ներկայից. մեր նախահայրերը—Հայաստանը, նրա նահապետները, առաջին լուսաւիչները, տառերի գիւտը, յեղուն, հինգերորդ դարի հայերը, հայ կանայք, հին տունը, հին ուսումնարանը, նիւթեր նորագոյն ժամանակներից). գինը 55 կ., գումարով 38 կոպ.։

5) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ բերականութեան տարբերը բազմաթիւ վարժութիւններով. գինն է 50 կ., գումարով 35 կ.։

6) Հենչէլի՝ թուաբանական խնդիրների ժողովածու, առաջին և երկրորդ տարվայ համար. գ. 35 կ., գումարով 20 կ.։

7) Նոյնը՝ երրորդ տարի. գ. 50 կ., գումարով 25 կոպէկ։

Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Николаевскій мост, фотографія Теръ-Гевондяна; օտարաքաղաքացիք՝ Тифлисъ, Центральная Книжная Торговля։ Միանոյն պայմաններով վաճառվում են Թիֆլիսի միւս գրավաճառների մօտ։

Նիկողայոս Տէր-Ղևոնդեան

(հ.) 4—4

Լոյս տեսաւ

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Դիմել հեղինակին՝ Эчміадзинъ, Іоаннесу Іоаннисіану.

(օ.մ.) 10—9

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ“

Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ

„Этикетъ утвержденъ прав.“ մակագրութիւնով

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական՝ ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բաքու, Բաթում։

(10, 20 30) 50—12

ՄԱՆԹԱՇԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հիմնված Թիֆլիսի առեւտր. ընկերութիւնից

Գատարաստական (հանրակրթական) դասարանում ընդունվում են առանց քննութեան այն տղաները, որոնք կը ներկայացնեն վկայական իրանց դասընթացքն աւարտելու մասին միդասեանից ոչ ստորին, իսկ առաջին դասարան ընդունվում են երկդասեան քաղաքային կամ գիւղական դպրոցներում աւարտածները, կամ թէ համապատասխան քննութիւն տուողները։

Ընդունելութեան քննութիւնները լինելու են յուլիսի 3-ին և 4-ին, առ. 9 ժամից։

Ուսման վճարն է 15 ր. կիսամեակի համար։ Խնդիրների ընդունելութիւնը և տեղեկութիւնների տալը տեղի են ունենում ամեն օր Թիֆլիսի առևտրական դպրոցի դիւանատանը, ցերեկվայ 9 ժամից մինչև 1 ժամը և պօստով։

Դպրոցը գտնվում է Թիֆլիսի առևտրական դպրոցի շինութեան մէջ։

(ու. կ.) 6—4

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ

ԵՒ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի

ամարային զբաղմունքները վերսկսվում են յուլիսի 5-ին. պատրաստում են մանուկներին բոլոր դպրոցների համար։

(29 1, 3) 3—1

Մամուլի տակից լոյս տեսաւ և վաճառ է հանված

ՐԱՖԻԻ

ԽԵՆԹ

Պատմական վեպի ռուսերէն թարգմանութիւնը 1877—78 թուերի ռուս-թիւրքական շրջանից.

հայերէնից թարգմանեց

Հ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ

Գինն է 1 ՐՈՒԲԼԻ

Հրատարակութիւն երկրորդ

Հրատարակութեան պահեստն է Թիֆլիսում, «ՓԱՐՈՍ» գրավաճառական կիոսկում։

(օ. մ.) 1—3

Ս. ԴԷՄՈՒՐԵԱՆ

„ՔՆԱՐ“

ժողովրդական երգարանը (Եւրոպական նոտաներով)

Վաճառվում է «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութներում, նաև կարելի է դիմել՝ Моздокъ, Терск. обл., Степану Демурянъ.

Գինն է 1 ռուբլի

(24, 29, յ. 3, 8, 13) 5—2

Զգուշացէք կեղծումներից

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ

Գ. Ֆ. ԻԻՐԳԵՆՍԻ

Պեպկինների, սեւութեան, դեղին բծերի, պուզիկների և պտուկների դէմ։ Անուշահոտ տուալէտային սապօն բարձր արժանաւորութեան։ Ծախվում է ամեն տեղ 1 կտորը 50 կոպ., ½ կտորը 30 կոպ.։ Ոսկէ մէդալ, Լօնդօն, 1893 թ. համար։ Գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իւրգենսի մօտ, Մոսկվայում։

(14,29) 25—16

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Գնացքների ամառնային երթեւեկութիւն

(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը՝ Թիֆլիսի ժամանակով)

	ԱՐԱԳ	ԱՐԱԳԱՑՎԱԾ	ՊՕՍՏԱՏԱՐ	ՄԱՐԴԱՏԱՐ	ԱՊՐ.-ՄԱՐԴԱՏ.
Բաքուից դուրս գալը. . .	—	4 ժ. 10 ր. ցեր.	11 ժ. 8 ր. առ.	5 ժ. 24 ր. առ.	—
Թիֆլիս հասնելը	—	8 ժ. 30 ր. առ.	5 ժ. 59 ր. առ.	10 ժ. 52 ր. երեկ.	—
Թիֆլիսից դուրս գալը .	(9 ժ. 3 ր. երեկ.)	—	(7 ժ. 47 ր. առ.)	(12 ժ. 28 ր. գիշ.)	—
Բաթում հասնելը	7 ժ. 14 ր. առ.	—	8 ժ. 40 ր. երեկ.	12 ժ. 36 ր. ցեր.	—
Բաթումից դուրս գալը.	11 ժ. երեկ.	—	7 ժ. 1 ր. առ.	5 ժ. 57 ր. երեկ.	—
Թիֆլիս հասնելը. . . .	9 ժ. 44 ր. առ.	—	8 ժ. 38 ր. երեկ.	7 ժ. 22 ր. առ.	—
Թիֆլիսից դուրս գալը.	—	(11 ժ. 21 ր. գիշ.)	(10 ժ. 36. ր. երեկ)	(8 ժ. 58 ր. առ.)	—
Բաքու հասնելը. . .	—	1 ժ. 35 ր. ցեր.	4 ժ. 45 ր. ցեր.	12 ժ. 57 ր. գիշ.	—
Ջուլֆայից դուրս գալը.	—	—	5 ժ. առ.	—	—
Երևանից դուրս գալը. .	—	—	—	—	9 ժ. 27 ր. երեկ.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը.	—	—	7 ժ. 59 ր. երեկ.	—	5 ժ. 30 ր. առ.
Թիֆլիս հասնելը. . . .	—	—	5 ժ. 28 ր. առ.	—	3 ժ. 30 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը. .	—	—	(12 ժ. 53 ր. գիշ.)	—	(11 ժ. 48 ր. առ.)
Ալէքսանդրօպոլ հասնելը.	—	—	10 ժ. 21 ր. առ.	—	9 ժ. 53 ր. երեկ.
Ջուլֆա հասնելը.	—	—	11 ժ. 47 ր. գիշ.	—	—
Ալէքսանդրօպոլից դուրս գալը.	—	—	10 ժ. 50 ր. առ.	—	10 ժ. 15 ր. երեկ.
Կարս հասնելը.	—	—	2 ժ. 9 ր. ցեր.	—	1 ժ. 49 ր. գիշ.

ԱՒՏՕՄՕԲԻԼԵԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՒԼԱԽ-ՆՈՒԽԻ

„ԱՄԱԳ“

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲԱԳԻՈՒՄ

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ նա ներկայ 1908 թուի մայիսի 15-ից Նուխի քաղաքի տրակտով—անդրկովկասեան երկաթուղու Ելախ կայարանում բանում է պայմանաժամային ճանապարհորդական երթեւեկութիւն աւտոմոբիլներով։ Աւտոմոբիլների գնալու և գալու ժամերը յարմարեցված են մարդատար գնացքների գալու և գնալու ժամերին անդրկովկասեան երկաթուղու Ելախ կայարանում։

«Ամագ» ընկերութիւնը, բացի բազմատեղ աւտոմոբիլ-օմնիբուսներից, 4 ր. վճարով մի ծայրից միւսը գնալու համար, ունի ճանապարհորդների համար երեք-չորս տեղանի կառքեր-աւտոմոբիլներ (լանդօ), որոնք վարձով են տրվում վերոյիշեալ տրակտի համար առանձին համաձայնութեամբ՝ վճարով։ Տոմսակները ծախվում են. 1) Ելախ կայարանում ա) երկաթուղու պասսաժիրական տոմսակների կասսայում և բ) ընկերակցութեան գրասենեակում Եղբ. Քէրիմօֆների տան մէջ. 2) Նուխի քաղաքում, ընկերակցութեան գրասենեակում, պօստի դիմաց։ «Ամագ» ընկերակցութեան փայերը սահմանափակ քանակութեամբ և նօմինալ գնով կարելի է ձեռք բերել միայն մինչև ներկայ 1908 թուի յունիսի 5-ը։ 1—1

ԱԼՄԵԶԱ

Կովկասի և Անդրկասպեան երկրի միակ ներկայացուցիչը Ի. Ա. Ախոբաձէն է։ Գլխաւոր պահեստ և գրասենեակ «Ալմեզա»-ի

Тифлисъ, Пушкинская ул. № 15.

ԱՏԱՄԻ ՅԱՒԻ

ՇՈՒՏ հանգստացնելու

եւ ատամն ու լնդերը ամրացնելու

ԼԱՒԱԳՈՅՆ ՄԻՋՈՅՆ Է

ԱԼՄԵԶԱ

ՇԱՏ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ցուցահանդէսներում նուէրների է արժանացել

ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ԶՐԻ

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Այդպիսիներին խնդրում ենք դիմել Ախոբաձէի դրասենեակը,

Пушкинская, 15.

Օտարաքաղաքացիներից կանխավճար ստանալով ուղարկում ենք վերադիր վճարով։

Դեղատներին զեղչ

Փոքրաչափ. սրուակը 40 կ. Իսկական սրուակը 1 ր. 20 կ.

Գրաս. և պահեստի բաժանմ. Баку, Старо-Полицейская, № 14. Հեռագիրների հասցէ. Тифлисъ, Ахобадзе.

(հ. 2.) 15—5

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ

ԿՕԾԿԵԶԷՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.

Ամեն տեսակ մօդային ձեւերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։

Իսկականը այս կնիքն ունի իր վրա։

ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ

կատարում է

„ԼԷՕՊՕԼԴ ՆԵՅՇԵԼԼԵՐ“

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՈՍԿՎԱՑՈՒՄ
ՐԻԳԱՑՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ

ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՑՈՒՄ
ԲՈՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՄԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԷՆՏՈՒՄ

Նիժէգօրօդեան տօնավաճառում

Իրբիտեան տօնավաճառում

ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան

Կրեմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.

(հ. կ.) 100—31

Типографія „Экономія“ Авака Мугдусіанцова Є-съми. Большая Ванкская ул. № 3.